

Պ Ա Յ Մ Ա Ն Գ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ժր.

Վեցամսեայ 6 Ժր.

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւր մեկ Ժրարով

Տարեկան 14 Ժր.

Վեցամսեայ 7 Ժր.


ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլ.

Վեցամսեայ 1.50 Տօլ.

ԿԱՆԻՊԻ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ԱՆԺ.



Լ Ր Ա Վ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՇԱՐԹԻ ԻՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ե

Redaction du Journal

«Iraounk»

(Bulgarie) VARNA

Редакция

на ВѢСТНИКЪ

«Иравуни»

ВАРНА

Դրոշինը Իո չեմ
արտիր

ՅԱՆՈՒՑՄԱՆ Կ. ՀԱՅ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
ՎԱՌՆԱ



ԳԼԽԱՌ ԳՈՐԾԱԿԱԼ

Առաջին քաղաքի Վիճակահանութեան
որ երաշխաւորեալ է Պուլկար կառա-
վարութեանը :

Առաջին կարգի հոգի տուողը հասած
են եւ պիտի քաջութիւն Օգոստոս 24ին
Շահող թիւերու վճարումը վայր-
կենական Պաշտօնականութեան համար վճարման
գիւրութիւնը կը տրուի մինչեւ
ամսագլուխ :

Բաղդերին փորձել ու գողները ա-
մենայն վստահութեամբ թող գիտեն մեզ :

ՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ
ԼԱՀԵՅԻ ՄԵՉ

Բրո Արսէնիայի վերջին թիւը
մեզ բերաւ կարգ մը մանրամաս-
նութիւններ Հայկական խնդրոյն
համար խաղաղութեան Բ. Համա-
ժողովին եղած դիմումներու մա-
սին :

Քանի մը ամիսներ առաջ երբ
Պաշկարիայ մէջ հրապարակային
բացագանչութիւններով կոչեր
կըլլային Հայոց կողմէ Տ. Բիւզ
Գիւլաւը Լահէյ շրկելու, մենք
գիտեի տուինք թէ պէտք չէր
այս անգամ ալ թշնամի արթն-
ցնող ազմուկներ հանել, որպէս
զի անոր առիթն է միջոց տուած
չըլլանք կանխարգել միջոցնե-
րու դիմելու, ինչ որ ըրած էր
Լահէյի Ա. Համաժողովին, Տ. Մի-
նաս 25րդի պատուիրակութիւնը
բեկանելու համար, նոյնպէս գի-
տեի տուինք թէ հայ ազգին հա-
մար անպատշաճ ու անպատուա-
բեր էր լոկ եւ միմիայն օտարազ-
գի մը պատուիրակ շրկել մեր
ազգային խնդրոյն համար, ալ
պէտք էր գէթ ընկերացնել ա-
նոր մէկ երկու հայեր ալ Մեր
այս երկու բանաւոր դիտողու-
թիւնները միայն արձանագրուած
մնացեան իրաւունքի էջերուն եւ
լուրջ դասակարգին մտացը մէջ,
եւ անդին աղմուկը շարունակուե-
ցաւ ու Տ. Բիւզ Գիւլաւը հեռա-
գիրներով պատուիրակ կարգուե-
ցաւ Ոչ ոք չէր գիտեր թէ ազ-

գին գերագոյն պետը, Վեհ. Հայ-
րիկը, այս անգամ զգուշաւորու-
թեամբ գործելու եւ պատշաճ ըն-
տրութիւններ ընելու պէտքը
տեսած էր, լուկ միջոց ընտրե-
լով ու Լահէյ շրկելով Գեր. Տէր
Քէրոզ Եպիսկ. Իւթիւճեանը, Եւ-
րոպայի Հայոց առաջնորդ, Տէր
Յովհաննէս Շահնազարեանը, Կ.
Պոլսոյ Հայրենիք օրաթերթի
նախկին տնօրէն եւ Տ. Աւետիս Ա-
հարոնեանը, ներսեւեան բարձր
վարժարանի վարչ անդամ, Այս
պատուիրակութեան կազմութիւնը
այն ատեն միայն իմացուեցաւ
երբ արդէն Լահէյ երթալով հարկ
եղած դիմումները ըրած էր, նոյն
զգուշաւորութեամբ վարուած էին
նաեւ մեզ վիճակակից կարգ մը
ազգերու ներկայացուցիչներ, Ար-
գիւնքը բացասական իսկ եղած
ըլլար, զգուշաւորութիւնը պար-
տաւորիչ էր, մանաւանդ մեզ հա-
մար որ աղմուկներու փորձերը
տեսած էինք :

Ամենայն Հայոց Վեհ. Կաթո-
ղիկոսին կողմէ Լահէյ շրկուած
պատուիրակութիւնը Պեռլինի
դաշնագիրը ստորագրող մեծ պե-
տութեանց, Ամերիկայի Մ. Նա-
հանգաց եւ Պարսկաստանի պատ-
ուիրակներուն մատոյց հետեւ-
եալ նամակը եւ ունկնդրութիւն
խնդրեց :

Լահէյ 7 օգոստոս 1907

Տէր Պատուիրակ

Հայոց էջմիածնայ Կաթողիկոսին
պատուիրակը Իւթիւճեան Եպիսկոպոս
Լահէյի Համաժողովին առջեւ, համար-
ձակութիւն կառնէ Տ. Տ. Պատուի-
րակներուն յիշողութեանը ընծանել
հետեւեալները :

Երբ մեծ պետութեանց իրազօրները
1878ին գումարուած Պեռլինի մէջ, խոր-
հրդակցեցան դաշնագրի տրամադրու-
թեանց մասին, որոնք պիտի բարե-
կարգէին վիճակը թուրք կառավա-
րութեան հպատակներուն, Հայոց Կ.
Պոլսոյ Պատրիարքը, Ամեն. Տ. Ներսէս
Վարժապետեան, շրկեց հոն հայ պատ-
ուիրակութիւն մը որուն զուլաը կը
գտնուէր Ուրիմեան արքեպիսկոպոսը
որ այժմու Կաթողիկոսն է, պարզելու
համար անոնց իր ժողովրդի թշուառ
վիճակը Ասիոյ թրքական նահանգնե-

րուն մէջ, Այս պատուիրակութեան
առաջ եկաւ Պեռլինի 61րդ յօդուածը :
(61րդ յօդուածը նոյնութեամբ ըն-
գործակուածն է :

Քան ասիաներ անցան եւ այս 61րդ
յօդուածն ոչ մի գործադրութիւն չը
գտաւ Յետոյ, 1894էն 1896, փոխա-
նակ խոստացուած բարենորոգմանց մեր
ժողովուրդը ջարդուեցաւ :

Վեց մեծ պետութեանց ներկայա-
ցուցիչները այն ատեն խմբագրեցին
յիշատակագիր մը եւ ծանուցագիր մը
ու յանձնեցին Դրան 1895 մայիս 11ին :

Դեպքաններու ծրագիրը կը պարու-
նակէր նաեւ տրամադրութիւններ թէ
«հարկ էր ներմուծել վարչական, եւ-
լեւմտական եւ դատական կազմակեր-
պութիւն Հայոց բնակած նահանգնե-
րուն մէջ» եւ «օգտակար կը սեպէր
մասնաւոր ծանուցագրով ըր ցոյց տալ
ինչ ինչ միջոցներ վարչական կարգա-
դրութեան մը, որոնք հիմը կը կազմեն
այդ բարենորոգմանց եւ որոնց Բարձր.
Գահէն ընդունուիլը նախնական կա-
րեւորութիւն ունի» :

Նորին վստմութիւնը Տ. տը Նէլի-
տով, Ռուսիոյ Պոլսոյ դեսպանը, այդ
ծանուցագիրը յաջողութեամբ ու ստո-
րագրողներէն մին եղած է :

Այն ատեն անհրաժեշտ դատուած եւ
որչաք քրնտոնեաներուն նոյնչաք ալ
մահմաականներուն համար օգտակար
նկատուած այս բարենորոգումներէն
եւ ոչ մէկը չիրականացաւ տասը տա-
րիներէ ի վեր, Ընդհակառակը Հայ ժո-
ղովրդի տագնապը միշտ աճեցաւ թըր-
քական նահանգներուն մէջ. հազա-
րաւոր հայեր մեռան կամ կոտորեցան
մասնակի կոտորածներու մէջ. եւ վեր-
ջին յուշիս ամսոյն ալ Մշոյ դաշտին
ղէպերը վերաբացին կոտորածներու
ողբերգական թուականը նման 1894,
1895, 1896ին :

Ն. Ս. Օծուլիւն Ամենայն Հայոց
Կաթողիկոսը, Սրբազան Խրիմեան, Կու-
զայ վերստին, 30 տարիներէ յետոյ,
թախանձել արդարութիւնը եւ գութը
քաղաքակիրթ պետութեանց, Այսօր
մահուան սեամին վրայ Նա չուզեր
մեռնիլ՝ հանդէպ իւր ժողովրդին իր
այս բարձրագոյն պարտականութիւնը
կատարած ըլլալէ առաջ :

Ստորագրութիւն

3 հայ պատուիրակներու

Բ. Համաժողովին նախագահին
կողմէ հետեւեալ գրաւոր պա-
տասխանը տրուած է :

ՌՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐ.
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Խաղաղութեան Բ. Համաժողովի նա-
խագահ Նորին Վսեմութիւնը ունկն-

դրութեան պիտի ընդունէ վաղը շաբաթ
10 օգոստոս առաւօտեան ժամը 10ին
Տէր Իսիմեան Եպիսկոպոսը :

Պեռլինի դաշնագիրը ստորա-
գրող պետութեանց եւ Ամերիկայի
Մ. Նահանգաց պատուիրակները
իրենց պատասխանագրին մէջ
խիստ բարեացակամ ոճով մը
յայտնած են իրենց ցաւը թէ
չեն կրնար ունկնդրութիւն տալ
Կաթողիկոսի պատուիրակներուն,
որովհետեւ, ըսած են, իրենք բը-
նաւ ձեռնհասութիւն չունին, Լա-
հէյի Համաժողովին մէջ Հայկա-
կան խնդրով զբաղելու համար :

Կաթողիկոսին պատուիրակնե-
րը հետեւեալ յայտարարութեամբ
բողոքեցին :

Լահէյ 10 օգոստոս 1907

Լահէյի Բ. Համաժողովի
Տ. Նախագահին

«Ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսին
պատուիրակները չորհրդակալութիւն
յայտնելով հանդերձ Տ. Տ. Պատուի-
րակներու արտայայտած անձնական
համակրանքին հայ ժողովուրդին ու
իրենց պաշտօնի մասին, չեն կրնար
Լահէյէն բաժնուիլ առանց հաստատե-
լու այն իրաւունքները զորս հայ ազ-
գը պէտք է վայելէ թուրքոյ մէջ ըստ
միջազգային դաշնագրոց :

«Տ. Նախագահին բերանացի եւ շատ
մը Պատուիրակներուն նամակներուն
միջոցաւ Լահէյի Բ. Համաժողովը մեր-
ժեց մեզ ունկնդրել. ձեռնհասութիւն
չունենալ առարկելով զոր հիմնաւոր
չենք գտնել :

«Թուրքոյ մէջ Հայոց վիճակը Թըր-
քական գործ մը, ներքին քաղաքակա-
նութիւն չէ. Պեռլինի դաշնագրին
61րդ յօդուածով պետութիւնները զայն
միջազգային գործի մը վերածած են,
եւ իրենց 1895ի յիշատակագրով դես-
պանները վերստին սոյն յատկանի-
չը տուած են անոր : Բոլոր աշխարհ
կը վկայէ միւս կողմէ թէ թիւրք կա-
ռավարութեան կազմակերպած կոտո-
րածները հայ նահանգները ենթարկած
են ու կենթարկեն ամենավայրագ պա-
տերազմներու բոլոր շարիքներուն, եւ
թէ Եւրոպայի խաղաղութիւնը երբէք
չպիտի ապահովուի մինչեւ որ Փոքր
Ասիոյ այս խոռվութիւնները պետու-
թեանց բանակները փոխանք չը հան-
դիպեն :

«Այս պայմաններով, մեզ անընդունե-
լի կը թուի թէ խաղաղութեան միջազ-
գային Համաժողովը կարենայ մերժել
բոլորովին Հայկական խնդրի քննու-

թիւեր, եթէ, ինչպէս վերջին օրինակները ցոյց տուին, Համաժողովը խառնիր զետեղելէ եւ պարզ բազմանքներ յայտնելէ յետոյ, ետ քաշուի վերջապէս միջոցներ փնտռելէ եւ սկիզբունքներ գործադրութեան գնելէ:

Գ. ԻԻԹԻԻԾԵԱՆ ԵՊԻՍԿ.
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ
Յ. ՇԱՀՆԱԶԱՐ

Այս բողոքագրէն յետոյ ոչինչ չըսեք Բազմաձայնաւոր Այս մեզ կը մնայ հասկնալ թէ էմտէք. Ռոն. մենի Պոլսոյ թղթակցին հաղորդած լուրը ի՞նչ էր, որ կըսէր թէ Հահէյի համաժողովը թուրքիոյ մասին աննպաստ որոշումներ տուեր է և այդ պատճառաւ Սուլթանը անհանգստութեան մատնուած, իր գետպաններուն հրահանգներ կու տայ դիմումները ընելու եւ րոպական գահալիճներու առջև:

ԻՐԱՐ ԿՍՊԱՆՆԵՐ == ԻՐԱՐ ԿԸ ՄԱՏՆԵՐ

~*~*~

Ամերիկայի մէջ վերջերս իրարու յաջորդող եղեռնային դէպքերը լաւապէս առիթ կը նմայեն կարգ մը մարգոց՝ որոնք յանկարծ ջերմանալու ու նախանձախոգի հայրենասէրներ դառնալով կը փորձեն անիրաւ ու լիբը շանթեր արձակել ու փողոցային հայհոյանքներ տեղացիներ, թէ մեր ինկող հերոսներուն եւ թէ անոնց ճամբան անկասկիտօրէն շարունակել յամառողներուն հասցէին:

Ու կը գտնուին անձեր ու խումբեր որոնք չը կարմրելով ալ յեղափոխականներ կը հռչակեն ինքզինքնին, եւ որոնք սակայն՝ յեղափոխական սրբազան սկզբունքներուն դէմ մեղանշելով կոյր կուսակցութեան մը, թեւ ու թիկունք կը հանդիսանան անոնց, որոնք արդէն տարիներէ ի վեր կը փափաքէին որ, յեղափոխական փրկարար զաղափարը կործանուէր, վերնար, լմինար, հայ արիւնտ ու վրիժառու սրտերէն:

Ու ցաւով դիտենք թէ՛ առիթէն օգտու քաղել ուզող, բոլոր ազգա-նանքները, թրքա-էրները, կուսակցա-

մունքները, բոլոր մասնիկները, իրարու հետ դաշնակցած՝ գործի վրայ ըլլալ կերեւին այս պահուս, գիտակցաբար թէ անդիտակցաբար. ոտքի տակ առնելով ազգային պատիւը, հպարտութիւնը ու վեհանձնութիւնը եւ կաճապարեն մեզ ներկայացնել իբր ստորիւ մարգասողան ու մատնի՛լ եւ ազատութեան անարժան ժողովուրդ մը օտարներու առջև, եւ իրենց «տաղուլին» ձայնը լսելի ընելու տխուր նպատակաւ. կաւ. կը յանգեն մինչեւ իսկ ազգային նուիրական գաղտնիքներ երեւան հանել, թարգմանել, տպել ու հրատարակել:

Ամենքն ալ գիտենք թէ՛ նմանօրինակ պարագաներու մէջ, ամբողջ պարզ ու հանգաւտ եւ տրամաբանօրէն խորհելու անկարող է. անկայ չկրնար զանազանել, չը ճանչնար գէշը աղէկէն, ճշմարիտ յեղափոխականը՝ կեղծաւորէն, ու երբ մարդ մը Հնչակեան մայր կուսակցութեան անունով ոճիւր մը կը գործէ՝ ամբողջ առանց դատելու, առանց մտիկ ընելու, կը վճռէ ու կը դատապարտէ ամբողջ Հնչակեանութիւնը, անոր վերագրելով այս սեւ ու յեղափոխութեան անուանը արատ բերող ոճրը:

Ահա ամբոյն է որ երեկուսն իր սիրած ու պաշտած յեղափոխութեան դէմ այսօր կը հայհոյէ, կանադէ վրտանգ մը՝ որ գէթ մեր խելքը գլուխը եզող հայրենասէրները տեսնելու էին:

Կրակը մարելու համար, պէտք է որ «էլ պաղենք» հոն վազենք:

~*~

Ողբալի թաւանձեանի սպանութեան գործը ամէն հայ պէտք է սրտանց դատապարտէ, ու չեմ կարծեր որ, պիտի գտնուի հայ մը որ ուզէ քաջալերել նմանօրինակ դէպքերու կրկնուիլը: Ըսինք թէ՛ թող թաւանձեան մը, անտարբեր, հակադիմադրական եւ կամ բոլորովին ազգային աղէտներուն առջև խուլացած անձ մը եղած ըլլար ճշմարիտ յեղափոխականներուն պարտքն էր որ առանց յուսահատելու, առանց կեանք մը վերջացնելու՝ ուրիշ ու տարբեր միջոցներու պէտք էր որ դիմէին, մտենալով ու մտնելով անոնց մէջը, չփուլելով անոնց հետ, համոզելով, խրատելով, բացատրելով անոնց թէ՛ Միայն եկեղեցիին բուրձար մը նուիրելով, կամ հրահանգներ քանի մը ոսկի տալով, ազգային պարտա-

կանութիւններն իրուի կատարած չէին ըլլար, ու ասիկայ կարելի էր ըլլալ առանց ո եւ է մէկուն քիթը արիւնելու: Երբ ինքեւ կեանք մը որ կը վերջանայ, ուժ մըն է որ կը պակսի հայութեան, եւ որքան ալ քարացած ուժ մը ըլլար ան, օր մը սակայն իր օգտակարութիւնը պիտի կրնար ունենալ տարբեր պայմաններու տակ:

Դաշոյնով ու ատրճանակով չէ որ մեր հարուստները կարգի պիտի գան, ընդհակառակը:

Եւ ինչու համար, անոնց անտարբերութիւնը մեղադրենք, քանի որ յեղափոխականներու կողմէ ո եւ է ջանք չէ եղած, որպէս զի մեղմօրէն շահելով անոնք, բացատրելով թէ՛ ինչու համար հայր պէտք է որ յեղափոխութեան գաղափարին պլուրի, եւ թէ ինչ են սլաւոնները որ մղած են հայերը յեղափոխականներ ըլլալու:

Ինչու համար հարուստները մեղադրենք ու դատապարտենք, երբ անոնց վեղարարութիւնը անոնց գլխու խորհրդաւոր շարժումներով կը ջանան համոզել անոնք թէ յեղափոխութիւնը ցնորական երազ մըն է, եւ թէ անոր հետեւողները, ուրիշ բան չեն, այլ միայն սրբիկաններ, գողեր ու մարդասպաններ:

Ամէն ճշմարիտ յեղափոխական ու մանաւանդ ամէն հնչակեան պէտք է որ բուռն կերպով բողոքէ այն բոլոր անբարոյականութեանց, բոլոր մատնութեանց դէմ, որ այս միջոցս Ամերիկայ կը կատարուին:

Թաւանձեան մը սպանարիքի տակ դրամ չի տալու համար գնդակահար կըլլայ, Արիւստ մը ազգին մէկ մշակ՝ երկու անգամ անխիղճ մարդերէ կը դաշունահարուի ու կը ծակըկուի կապարներով, Զմեռնիա Պալեոգիան մը արիւնին մէջ կը լողայ, ու ժամահարեանց մը Ռուսիոյ մէջ կըսպանուի պատճառը:

Հայը հայը կըսպանէ, հայը կը մատնէ. վայրագ ծիծաղներ պարգեւելով մեր դարաւոր թշնամի թուրքին:

Արշաւ Կարկուսեան
Լճուտոն
Թ. ՊԱՍՄԱՃԵԱՆ—ՍՕՖԻԱ
Գլխաւոր Գործակալ
Սօֆիա քաղաքի Վիճակահաւ-
ունքներու տնտեսութիւն
Նաեւ կը գնէ ու կը վաճառէ իր եւ ուրիշներու հաշտոյն ասեւ տեսակ արժէթերով:

10-7

ՄԵԾ ՀԱՆԴԵՍ ՍՈՓԻԱՅԻ ՄԵԶ

ԲԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԸ ՆՈՐԻՆ
ԱՐԲ. ԲԱՐԶՐ. ԻՇԽԱՆ ՖԵՐԻՏԻԱՆՏԻ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Այս տօնը տօնելու համար որչափ որ ալ որոշուած էր թոնովա առաջին մայրաքաղաքը, բայց հիւանդութեանց պատճառաւ, որոշուեցաւ կատարել հոս Սօֆիայի մէջ: Այստեղ թէպէտեւ ուշ որոշում տրուած, բայց խիստ արագ կերպով սկսան պատրաստութիւնք եւ 5-10 օրուան մէջ փողոցները զարդարուած էին գունաւոր դրօշակներով, Լակերը, ուր պիտի ըլլար փառաւ, պատրաստուած էր փափիլիոն մը, շնորհաւորութիւնք ընդունելու համար, եւ ուրիշ փափիլիոն մը ճաշկերոյթի համար, ուր ներկայ պիտի ըլլային 2,500 հոգի. այս ամէնը ամենայն արագութեամբ պատրաստուել էր:

Դեռ մի օր առաջ սկսեցին երկաթուղիները հոս բերել անհամար հիւրեր: Այնպիսի խուռն բազմութիւն մը յեղուեցաւ որ մինչեւ ցարդ տեսնուած չէր Սօֆիայի մէջ: Թուով մօտ 40-50 հազար հոգի կը համրէին Պալեոգիաները զեռ շարաթներ առաջ վարձուած էին, ժողովուրդը համարեա մեծաւ մասամբ գուրսը մնացած. մէկ մասը ցրուեցան տունները, իսկ միւս մեծամասնութիւնը պարտէզները, սրճարանները եւ զարեղատունները, որոնց հրաման կար քաղաքապետութեանէն ամբողջ գիշեր բաց մնալու:

Դեռ 14ին հանդէսին տպեալ ծրագիրները ցրուեցան: 15ին ասուտուէն նշանակուած էր ժամը 6 1/2ին բացուած, որը պիտի իմացուէր ժողովրդեան 31 թնգանթիւնի որոտով: Բայց ժողովուրդը դեռ ասուտուէնէ ժամը 5ին խուռն բազմութեամբ կը յառաջանար դէպ ի Լակեր, ուր պիտի կատարուէր հանդէսը: Ժամը 6ին զինուորները շարուած էին իրենց կարգով. առաջին կարգին պալատական դիմուորները, երկրորդին հին յեղափոխականաց խումբը, երրորդին զինուորական զարմար աշակերտները եւ կարգաւ միւս գունդերը, իսկ Լակերին տղ կողմը ուր չինուած է աղօթատեղին, կանգնած են Պիսիքիթիթիները, իւնաքները, արհեստաւորները եւ ընկերութեանց ներկայացուցիչները մօտ 10-15 քրօշակներով: Իրաւանթիւներու

— Աւելի աղէկ, բնու երկիւղ մը չը կայ. հիմակուան կուսակալը չը թողուր որ խոռովութիւն մը տեղի ունենայ . . . Ես ոտիկաններու աչքը կուրցունելու կերպը գիտեմ . . . կուտամ քանի մը մէծիտ . . . անոնք հարցաքննութեան անգամ չեն եւթարկեր . . . միայն թէ ապահովաբար մինչեւ հոս կարենայ գալ:

Ու նախիկ տուտու հոգեւոր կարօտէն բղձկուած՝ սկսաւ արտասուելով ըսել:

— Ահ, եթէ գիտնայի՛ք ի՞նչքան սեւ օրեր անցուցի . . . եթէ գանայի՛ք ի՞նչքան լացի անոր մասին: Բայց Աստուած գթաց վրաս . . . աշխարհքիս մէջ անկից զատ մէկը չունէի . . .

— Ըսել է թէ երիտասարդէն տեղեկութիւն մը չըկտայ:

— Աս խեղճ տղան բանտն է, կըսեն թէ՛ քանի մը ամիսէն պիտի ազատուի . . .

— Կարելի՞ է տեսնել զինքը:

— Մօտ ժամանակներու թոյլտու-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

93

ԱԻՆՉԱԿԱՊԵՏԸ

~*~*~

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱԻՆՉԱԿԱՊԵՏԸ

(Շար. նախորդ թիւէն)

— Նախիկ տուտու, ասկից քանի մը տարի առաջ բանտարկուած երիտասարդ մը կայ եղեր հոս տեղ, ըսաւ Աւաղակապետը, տեղեկութիւն մ'ու-նիք անոր մասին . . . ի՞նչ եղած է:

— Ի՞նչ գիտնամ . . . պէ՛տք է քանտերու վերատեսուչին երթայիք, մա՛րդ, աւարկեց Նախիկ տուտու. ես ի՞նչ գործ ունիմ ատանկ կառավարական խնդիրներու մէջ:

— Այդպէս է . . . գիտեմ թէ ձեզի

պէս բարի կ'նոյ մը գործը չէ կառավարական խնդիրներու մէջ մտնել. բայց այդ երիտասարդի մասին տեղեկութիւն հարցնողն անանկ ուզեց որ հոս գայի . . . Կրնայ ըլլալ որ հետաքրքրուած էիք ու գիտէիք թէ ազատուած է մինչեւ ցարդ . . .

— Կրնամ գիտնալ թէ ո՞վ է այդ երիտասարդի մասին ինչ տեղեկութիւն ուզողը . . .

— Կրնաք գիտնալ . . .

— Ո՞վ է:

— Ձեր քրոջ տարաբաղդ աղջիկը:

— Ի՞մ քրոջ տարաբաղդ աղջիկը . . .

— Այո՛:

— Տէր Աստուած . . . ի՞նչ կըսէք, մարդ, ո՞վ է այդ աղջիկը . . .

— Ո՛ր է . . . երբ տեսաք զինքը . . .

— Ի՞նչ է իր անունը . . .

— Կեցէ՛ք որ յայտնեմ: Վերջին կուտորաններու ատեն առեւանգուած է ըսած աղջիկս. հազիւ տասնընեւ տարու կայ. Բարձր է հասակով անունը Նուրիմէ կոչուած է թուրք ապա-րանքին մէջ եւ ես այդ անունով կը

ճանչնամ զինքը: Ձեզի համար մօրաքայտ է, ըսաւ ու խնդրեց որ անպատճառ այդ երիտասարդին վրայօք ճըշմարիտ լուր մը տաք: Արդե՞օք կայ ասանկ մէկը . . . Ի՞րոքդ աղջիկն է:

— Ո՛հ, չիտակ է, չիտակ է . . . բայց ո՛ր է հիմակ:

— Պարսկաստան կը գտնուի:

— Հո՞ն տարուած է:

— Այո՛:

— Փաշան ալ հոն է:

— Ո՞ր փաշան:

— Շելվի փաշա:

— Ես փաշա մաշա չեմ գիտեր անի-կա բարի մարդու մը պաշտպանութեան ներքեւ կը գտնուի:

— Հայ է այդ մարդը:

— Հայ է:

— Ահ, ի՞նչ ընեմ որ հոն երթամ . . . արդե՞օք կարելի է հետեւնիք գալ . . .

յանձն կ'առնէ՛ք . . . ես ունեցածս կը ծախեմ այս տեղ ու անցագիր մըն ալ կը հանեմ . . . Ի՞նչու . . .

— Ի՞նչու չըլլար, բայց ան կուզէ ձեր քովը գալ . . . Ի՞նչ կ'ըսէք:

որոտուածները իմաց տուին ներկայ բազմութեան նորին Բարձրութեան գալուտը: Իշխանը օթոմոպիլի մէջ նըստած իւր զաւակներով Լակեր հասաւ, ուր իջնալով օթոմոպիլէն, հեծան ձիերու վրայ որոնք արդէն պատրաստուած կը սպասէին: Շատ հետքերը բական էր տեսարանը. առջեւէն կերթար Իշխանը, յետոյ գահաժառանգ Իշխան Պորիւրը, եւ Իշխան Բիրիլը, որոնց ետեւէն ժեներալները եւ զինուորական նախարարը: Կարգով նստի պալատական զօրազունդէն սկսաւ շնորհաւորուած տողանցումը: Հին Յնդափոխականաց խուճերն մօտ Իշխանը կանգ առաւ եւ մի քանի խօսքեր փոխանակեց: Յետոյ գալով աղօթատեղին, մըսաւ աղօթելու որը տեւեց կէս ժամէ աւելի, ուր ներկայ էին օտար ազգութեանց ներկայացուցիչները որոնք մասնաւոր հրաւիրուած էին, նախկին եւ ներկայ նախարարներ նախկին եւ ներկայ երեսփոխաններ, քաղաքապետներ, նաչաւնիկներ, եւն. եւն. Աղօթքէն վերջ քաշուելով Լակերին հիւսիսային կողմը, ընդունեց շնորհաւորութիւնները փարատին մէջ: Փարատէն վերջ, ինչպէս որ կարգադրուած էր, դնաց փափկիւնին մէջ ուր ներկայացան բոլոր ազգութեանց ներկայացուցիչները, որոնց մէջ էր նաեւ մեր քահանան, որ գաղղերէն մէկ երկու խօսք արտասանեց Իշխանին ուղղեալ: Ն. Բարձրութիւնը ի պատասխանի՝ իւր հայերու հանգէպ ունեցած համակրութիւնը յայտնեց, Հին եւ նոր նախարարները, հին եւ նոր երեսփոխանները, ընկերութեանց ներկայացուցիչները եւն. եւն., իրենց շնորհաւորութիւնները ու յարգանքները մատուցին որը հազիւ լմացաւ ժամը 1ին, կէս օրէ վերջ:

Երեկոյեան ժամը 5 1/2ին երեկոյթ տեղի ունեցաւ նախագահութեամբ Նորին Արք. Բարձրութեան, ներկայութեամբ 2,500 հոգու, որոնք մասնաւոր հրաւիրուած սեղանին մասնակցեցան: Որոշուած էր երեկոյթէն յետոյ լուսավառութիւն ժողովրդեան խուճն բազմութեան ներկայութեամբ պալատին առջեւ. բայց ի վերջոյ յետաձգուեցաւ միւս երեկոյեան, որը կայացաւ շատ չքեղ կերպով:

Բազմութեան մայրաքաղաքէն վերադարձը ալ աւելի դժուար կը կատարուի. կառախումբները անկարող են մէկ կամ երկու օրուան մէջ պարպել Ոսթրիան, այնպէս որ երկուսական մասնաւորները իմաց տուին երթալու:

Թիւն եղաւ անոր քով երթալու:
— Ատ աղէ՛կ, ուրիշ կրնանք մէկը գտնել որ յանձն առնէ անոր քով երթալու:
— Տեսնե՛նք... անպատճառ տեսնել հարկաւոր է:
— Այո՛, անպատճառ տեսնել կու գեմ:
— Իս կերթամ:
— Բայց կասկածի մը չենթարկուիք ատանկով:
— Ձէ, չեմ ենթարկուիր:
— Ե՛րբ կրնաք երթալ:
— Այսօր կէսօրէն ետքը: Դուք իրիկվան դէմ դարձեալ տունս եկէ՛ք որ պատասխան մը ստանաք:
Աւազակապետը մեկնեցաւ: Ան աւան նառիկ տուտու զխուճն վրայ նետեց իր սեւ շալն ու ինքն ալ բանտը գնաց:
Իրիկուան դէմ, դեռ արեւը մար չը մտած, Աւազակապետը գուռը զարկաւ ու ներս մտաւ: Նառիկ տուտու ուրախութեան ժպիտ մը պատկերացնելով իր թոշնած ու ծաղրելու ժամ եղող զէմքին վրայ, ըսաւ.

չինա շաղիւ կրնային քաշել խուճն բազմութեամբ լեցուն վակոններու շարքերը:
Այսօր երրորդ օրը բազմութեան մաս մը դեռ չի կարողանար մեկնիլ, միջոցներու պակսելուն պատճառաւ: Փողոցներու զտրգարանքները, եռադոյն սիւնները եւ գրօչակները դեռ կը մնան, եւ ինչպէս կը տեղեկանում պիտի մնան մինչեւ 30 օրոքս... Երբ տեղի պիտի ունենայ ուրիշ հանգէս մը ոչ նուազ չքեղ, ուր սերկայ պիտի ըլլան Ռուսիոյ առաջին իշխաններէն, ժեներալներէն, նաեւ հին զինուորներէն անոնք՝ որոնք կոռւած են Պուլկարիոյ ազատութեան ժամանակ: Հանգէսին առթիւ այժմանէ որոշեալ մասնախումբ մը պէտք եղած պատրաստութիւնները արագ կերպով յառաջ կը տանի:
Սօֆիա Ա. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
1907 Օգոս. 17

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ողբացեալ Տ. Յովհաննէս Թաւշտեան իր կենդանութեանը կտակ մը պատրաստած է եղբոր, պաշտօնապէս վաւերացուած Նիւ-Եօրքի նօտարութեան կողմէ, կրտակակտար կարգած է իր երկու քեռայրները՝ Տ. Գրիգոր Ալեանաքեան եւ Տ. Տօթթ. Թիրեաքեան Խան: Յիշեալ նօտարութիւնը ապահովագրեալ նամակներով ծանուցած է երկու կտակակտարներուն, որպէսզի յառաջիկայ հոկտեմբեր ամսուն մէջ որոշուած օրին անձամբ ներկայ գտնուին Նիւ-Եօրք, Թաւշտեանի կտակին բացուելուն, հսկելու համար անոր տրամադրութեանց գործադրութեանը: Առանց այս ձեակերպութեան կատարման կտակը չպիտի կրնայ բացուիլ:

Տ. Գր. Ալեանաքեան Պոսէն ճամբայ ելեր է դէպ ի Ամերիկայ, որոշեալ օրը Նիւ Եօրքի նօտարին մօտ գտնուելու ծրագրով:

— Լոյսաբերէ կը տեղեկանանք թէ Գահիրէ բնակող հարուստ հայ մը սպառնական նամակ մը ստա-

ցեր է որով իրմէ մեծկակ գումար մը կը պահանջուի եղբոր, ըստ ոմանց մէկ միլիոն ֆր.։ Նոյնպէս այժմ Եւրոպա գտնուող եգիպտացեալ քանի մը հայ հարուստներու ալ սպառնագրեր ղրկուել են: Կը թուի թէ Մարգուկէսեան եւ իր ընկերները ձերբակալուելէ առաջ այդ նամակները ղրկուել են: 1905ին նոյն խմբակը երբ Ունճեանը սպաննեց փութաց անմիջապէս սպառնագրեր ղրկել հայ հարուստներու, որպէս զի այն սարսափին տակ յաջողի խոշոր գումարներ ձեռք բերել: Նոյնը կրկնել են այս անգամ ալ, Թաւշտեանը սպաննել տալէ անմիջապէս յետոյ:

— Պատժօնի մէջ քանի մը տարիէ ի վեր հրատարակուող անգլիերէն «Արմենիա» թերթը որ վեր Հնչակ կուսակցութեան կողմէ կը հրատարակուէր աշխատակցութեամբ հայասէր ամերիկացի դրագէտներու, դադրած է նոյն կուսակցութեան պատկանելէ ետեւ յետոյ կը հրատարակուի անկախ ու հայ ժողովրդի օգնագրութեամբ:

— Կ. Պոլսոյ Պատրիարքարանը յանձնաժողով մը կազմած է հանգուցեալ եւ վառնայի լաւ ծանօթ Տ. Անդրանիկ Եօանէսբուի կապին գործադրութեանը համար, որ քառորդ միլիոնէ աւելի գումարի մը շուրջը կը դառնայ:

— Տ. Գեորգ Արքեպ. Երէցեան որ Կարնոյ առաջնորդ ընտրուեցաւ, մերժած է ընդունիլ այդ պաշտօնն ալ:

— Երզնկայի Առաջնորդ. Տեղապահ Ս. Թագէտոսի վանքը այցելած ատեն վանականներուն միջոցաւ անցաններու մէջ թաղուած գտեր է «Դեղթափ» անուն պատմական մասունքը, որ յանձնուած էր Ս. Արիստակէս հայրապետին Նիկիոյ Ս. Ժողովէն վերադարձին:

— Երզնկայի քահանաները հանգստեան թոշակի եւ կարօտ քա-

հանաներուն օգնելու համար կանոնագիր մը պատրաստած ու Պատրիարքարան ղրկած են վաւերացուելու համար:

— Արմաշի Դպրեվանքին նիւթահան տաղնապալից վիճակը պատկերացնող տեղեկագիր մը Պատրիարքին մատուցուած է փոխ վանահօր կողմէ: Եթէ պատշաճ տնօրինութիւն մը չըլլայ, ստիպեալ վանքին դռները փակել հարկ պիտի ըլլայ եղբոր Ունճեանի տարեկան մեծադուժար նպաստը դադրած է արդէն: Նոյնպէս ալ Թաւշտեանինը, որ տարեկան որոշ գումար մը կը վճարէ եղբոր Դպրեվանքին:

— Կարնոյ Սանասարեան վարժարանին հաստատման քսանեւ հինգ ամեայ Յոբէլեանը պիտի կատարուի Սեպտ. 28ին. հանդէսին պիտի մասնակցին նոյն վարժարանի բոլոր շրջանաւարտները նախկին աշակերտները, նաեւ բոլոր համակիրները:

— Կ. Պոլսոյ Բաղադ. Բժշկական վարժարանէն այս տարի 8 հայեր դեղագործ ելած են:

— Ժընէվի Հայ Ուսանող Միութեան կազմակերպած նուագահանդէսէն 1890 ֆր. հասոյթ գոյացած է, որ ամբողջութեամբ վասպուրականի սովեալներուն յատկացուած է: Նուագահանդէսին բոլոր ծախքերը վճարել է ծանօթ մարդասէր Լէօբօլտ Թալրի:

Եւ ՓնՏԻՈՒԻ

Սէրէթի Յովսէփ անուն անձը ասկէ 3 ամիս առաջ իր 12 տարեկան Պետրոս անուն զաւակը հետը առնելով հեռացած է վառնայէն: Կը խնդրուի իր հասցէն գիտցողներէն որ հաճին իմացնել խմբագրութեանս, որպէսզի իմացնենք իր ընտանիքին:



ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻԹԷՆ

Հասան մեզ մեծ քանակութեամբ նոր առնուած

ՀԱՅԵՐԷՆ ԿՐԱՄՕՅՈՆԻ ՓԼԱՅԱՆԵՐ

Փութացէք ապահովել Ձեզ վաճառումը այս նոր փառաշիրտ Ձեր նահանգին համար:

Մեր փառքներու ցուցակները հայերէն, տաճկերէն եւ զանազան եւրոպական եղանակներու կ'ուղարկենք ձեր փառքողաց:

Հեծելանիւնի, կրամօֆօնի եւ պէնզին լամպաներու վրայ մի տաք ապսպրանք ուրիշ տեղ նախ քան մեր ցուցակները աչքէ անցնելու:

Ն. ԱԼԵԱՆԱԿ Ե Ռ. ԹԵՐՈՒՆԵԱՆ — ՌՈՒՍՃՈՒՔ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԵՏԵԼԱՆԻԻ ՓՐՕԿԻՐԾ

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Պապը Ալի պիր սիրքիւնէր նոթաւ իւն քէնտի էլիւնէրի վասիթաւ իւն բրթթթթ իտէյոր Լահէյ գօնթէրանսն շու գարարընա գարըն քի տայիմի սուրէթտէ Լա Հէյտէ թէշքիլ օլընաճագ հէյէթի հաքէմիյէտէ թիւրքիայը իքիճի սընթ տէվլէթլէրին սըրասընա կէշիւրմիյէր:

— Իշլտէ վէ Սէմէրինկտէ տիււ վէլի մուղամա հիւքիւմտարլաւըն վէ նազըրլարըն կէօրիւշմէլէրի վէ գարարլարըն Ելըտըզ Սէրայընտա աղըր թէշթիւր հուսուլա կէթիւրմիյ տիւր, զիւրա օլ միւլա-գաթլարտա թիւրքիանըն պազը վիւլայէթլէրի իշլտէ ատլիյէ իս-լահաթլարըն իճրա իթմէք գարա-րը վէրիւմիյ տիւր, Կէօրիւնիյոր քի էճնէպի տէվլէթլէրտէն պու իսլահաթըն թէքիլթիւնէ թիւրք-լէր գաթիյէն գարըն տուրմագ իսթէյէճէքլէր:

— Աճէմ-թիւրք սինօր մէսէլէսինի թէտգըք իթմէք մէմու-լիյէթի իւն Պապը Ալիինին թէշ-քիլ իթիկի թիւրք գօմիսիօնը-նա Աճէմ տէվլէթլէրտէն տախի աղալար թային օլընմասը իշլտէ սատրաղամտան իրան էլիսինէ ճէվապ վէրիւմիյ տիւր, ֆագաթ թիւրք ասքէրլէրին Աճէմ թօր-րաղընտան կէրի չէքիւմէլէրի խուօրսընտա էլիսինին թալէպիւնէ ճէվապ վէրիւմիյ շու հալտէ էլի թէհրանտան թալիմաթ պէք-լէյոր:

— Սամօս ատասընըն պէյի Գօնսթանթին Գարաթէօտօրի Սուլթան աղլ իտէրէք, Եէրինէ Լահէյէթի թէմիկ աղասը Եօրկի Եօրկիտիսի թային իթմիյ տիւր, Սամօսը թիւրքիտան ալըրմագ ֆիպրինէ էվլէլէր պէյ գուվլէթ վէրիւր իմիյ:

— Սթանպուլտան «Աթանս Բու-մէն» օգոստոս 17 թարիխլէ շու թէլէկիւրաթը ալմըն տըր:

«Պապը Ալիյէ խապէր վէրիւ-տիւր» 600 քիշիւք պիր էրմէնի չէթասը սինօրտան կէշմէյէ հա-զըրլանըր ըմըշ:

Պու հալաուիս հագըղաթա Եա-զըն կէօմիւնմէյոր:

— Թիւրքիանըն իքիճի տէ-րէճէ տէվլէթլէր սընթընա գայտ ու գարար օլընմասընա տայիւր չըգան չայէաթը Լա Հէյ-տէն թէքիլ պիտէյորլար: Գօն-ֆէրանա հիշ պիր տէվլէթին սը-նըթ ու տէրէճէսինէ տայիւր պիր գարար վէրմէմիյ:

— Մակէթոնիտա Բուժ վէ Պուլկար չէթալարըն Եէրիւլէր-տէն մուհաֆազա օլընմալարընը մէնն իթմէք իշլտէ 8 թապուր Եէնի ասքէր Մաքէթոնիայա կէօն-տէրիւնէք օլտըղը Սթանպուլտան պիլաթիլիյոր:

ՏԱԽԼԻԷ

Ֆէխամ Բրէնս հազրէթլէրի-նին ճուլըսընըն զիյնէթ ու չէն-լիքլէրի մուլթանթան սուրէթտէ Պուլկարիանըն հէր քէօշէլէրին-տէն կիտէն գալապալըգլէ Սօֆի-ատա իճրա օլընտու իսէտէ, էճ-նէպի հիւքիւմտարլարտան հիշ պիր խուսուսի հէյէթ կէլմէմիյ իտի Պիր չօգ հիւքիւմտարլար թէպրիքնպմէլէր կէօնտէրտիլէր:

Սօֆիա զօղազլարընըն զիյնէթ-լէրի օգոստոս 30ա գատար գալ-տըրըլմայաճագ, զիւրա Եէվմի մէքըիւրէտէ պաշգա տահա մու-գատտէս ալըն ու զիյնէթլէր իճ-րա օլընտուճագ, Եանի Պուլկարի-այը քէնտի գանլարը իւն գուր-թարան րուս նահատակարըն նա-մընա Բլէլիւտա Եաբըլան խա-թիպլէլէրին (գամբարան) րէսմի քիւշատը իճրա օլընաճագ տըր: Պու ալն ու զիյնէթտէ հազըր պուլընմագ իշլտէ Բուսիտան պիր չօգ րէսմի զաթլար կէլէճէք տիւ-լէր:

— Պուլկար կիմնաղիօնլարըն րօթէսէօրլէրի Սօֆիատա Գօնիւրէ իթմէքտէ օլուպ, րէրչէնպէ կիւ-նիւ իլք մէճիսի ալըտը:

— Պուլկարիտան Մըսըրա հայ-վանաթ նազըլընա հիւքիւմէթի խըտիլիյէտէն մէզուլիլիթի թամ-մէ վէրիւմիյ տիւր, Եալընը շու չարթլէ քի կիտէն հայվանաթըն խասթալըգտան արի օլտըղընա տայիւր պուրատան չահատէթնա-մէ պուլուսուսն:

— Սօֆիատան շու գալապալը-սըրասընտան իսթիֆատէ իթմէք իւզրէ թիւրքաթ Օտաուր Պուլկա-րիտա իմալ օլան էնվայի խա-լըլարտան պիր սէրկի ալտը գըզ կիմնաղիտա սալօնընտա, թրան-տան, Յարիպրօտտան վէ Բանա-կիւրիչտէտէն կէթիւրիլէն խալը-լար թագտիր օլընտըլար:

— Բրէնս հազրէթլէրի շու մէ-սէրէթլի կիւնլէրի միւնասիպէ-թի իւն միւնիսթէրլէրէն նիշանլար վէրմէքտէն մատա պիր չօգ զա-պիթլէրէ վէ սիյասի մէմուրլա-րա նիշանլար վէ րուլթպլէր վէրմիյ տիւր:

ԲՈՒՍԻԱ

Աթանս վէսթիւքիւն իշարը իւզրէ, պիր վագըթլտան պէրու Բուսիա վէ ինկիլթէրա պէյնին-տէ Ասիատաքի քէնտի մէնֆա-աթլարընա տայիւր իթիլաֆի հա-սըլ իթմէք իշլտէ ճէրէյան ի-տէն միւղաքէրաթ նէթիճէ պու-լուպ, մուղալէլէնամէ Եաբըլմը վէ Բուս խարիճիյէ նազըրընտան վէ Բէթրսպուրկտաքի ինկիլիգ էլ-չիսիւնտէն իմզալանմըն տըր, իշ-պու մուղալէլէնամէ Եաբըլտա հիւքիւմտարլարըն թաստիքիւնտէն սօնրա նէշը օլընաճագ տըր:

— Բուսիանըն պազը նօթա-լարընտա գօլէրա զուհուր իթ-

միշ վէ իլլէթտէն Եօլէնլէր օլ-մուշ տըր:

— Չարըն Եօմիւնէ սուի գասթ էտէնլէրին մուհաքէմէսի րուլէթ օլընտու, իւշ քիշի ասըլաճագ, 8 սէնէ մահպուսիլէթէ մահքիւմ օլանլարտա պիր գըզ վար տըր: Սիպէրիայա կէօնտէրիլէճէք օ-լան մահքիւմէրտէ 4 գարը վար: Մահքէմէնին գարարը օգուստը-ղը վագթ տիյնէյէն Եհալիտէ հէ-յէճան վէ նէթիլէթ ալէմէթլէրի վէ հարէքէթլէրի կէօրիւլտիւ:

ԱՃԵՄԻՍՏԱՆ

Աճէմիստանըն Սատրաղամը Մէճլիսի Մէպուսանտան տըշարը չըգտըղը վագթլ պիր ատաթ թա-րաֆընտան րէվլվէր գուրշուսու-լիլէ գաթլ օլուսմը: Գաթիլ քէն-տիսի տախի թէլէթի նէֆօ իթ-միշ տիւր:

ՄԱՐՈՔ

Ֆէստէն Էվրօբալըլար գաշտը-լար, պու Մարօք բայիթաթլըն տա տէհչէթ պէօյիւք, զիւրա ա-սը գապիլէլէր չէհրէ հիւճուլ է-տէճէքլէր, չիտիքի Սուլթանը թահթտան էնտիւրուպ, Մուլա Հաֆիտի Սուլթան իւն էտէ-ճէքլէր տէյիւ շայի օլմուշ տըր: Սուլթան Ֆէստէն չըգուպ Բա-պատա կիտէճէք Եախօտ գաշա-ճագ ըմըշ:

— Օգոստոս 28[15տէ Դասապ-լանէա չէհրի տէհչէթտէ իտի-լէ կէշմէմիյ իտի քի Եէրիլէր հիւճուլ էտէճէքլէր:

Ֆրանսըզ գուվլէթի տաքէրիյէսի մէվգըլար թուլթարագ, հիւճուլ իտէնլէրին իւզէրինէ աթէշ իթ-տի Մարօքը աթլըլար աճէլէ-թէն կէրի չէքիլտիլէր, 4 քիւլ-մէթրօ գատար ֆրանսըզ բիյատէ-լէրի օնլարը գօվալատըլար: Ֆա-գաթ թէքէլէրին արգալարընտա պաշգա մարօքը սիւվարիլէր կիլլէնմիշ օլուպ էթրաֆտան ֆը-րանսըզ ասքէրինին իւզէրինէ հիւճուլ իթտիլէր: Պու Եսնատէ րէք տէհչէթլի պիր մուհարէպէ

վուգու պուլտու: Ֆրանսըզլար գահրամանանէ ճէնկլէշտիլէր, նիհայէթ Մարօքըլուլար կէրի չէ-քիլտիլէր վէ սաաթ 6 պուշուգ-տա գալկա խիթամ պուլտու: Ֆը-րանսըզլարտան 3 էօլիւ վէ 10 Եարէլի տիւշտիւ, քէզա 12 աթ կէպէրտի Մարօքըլուլարըն թէլէ-ֆիաթը չօգ ըմըշ:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՍՊԱՐՏ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր.
» Բ. » [433 էջ] 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ Կամ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿԱՆ Երկրորդ անգամ տպագ-րուած Եւ ճոխացած, Գին 1 ֆր.

ՆԵՏԱ Կը պատկերացնէ Պուլկար-նէրու նիստ ու կացը ու թուրքիէ կրած տառապանքը անոնց ազատու-թիւնէն առաջ, Գին 50 սանգիլ

ՀԱՅԹԵՆԻՔԻ ՁԱՋԵՐ Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանս-քէն, Ձեռնալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմեց ՎԱՌՆԱ «Ի ր ա ու ն ք» ի խմբագ-րութեան

ՎԱՐԺՈՒՀԻ ԿՈՒՋՈՒԻ

Սիլիստրէի աղգ. վարժարա-նին համար ճեռագործի կարող ու փորձ վարժուհիի մը պէտք կայ, որը ի վիճակի ըլլայ նաեւ աւանգիւ Երկրորդական դասեր վարժարանին մէջ:

Ի դիմաց Սիլիստրէի Աղգ. վար-ժարանաց Հոգաբարձութեան

Վ. Ատենաղապրի Ատենապետ Թ. ՓԱՓԱՋԵԱՆ Գ. Կ. ՏԻՐԱՑՈՒՆԱՆ

«ԱԶԳ»

Ամերիկայի Պօսթոն քաղաքին մէջ սկսած է հրատարակուիլ ԱԶԳ «նաեւ» նոյ չարաթաթերթ մըն ար: Այս նոր թերթը կոչուած է ոչ միայն ամերիկա-հայ կեանքի շինիչ ազդակներէն մէկն ըլլալ, այլ նաեւ՝ ազգային ինքնագի-տակցութեան եւ յեղափոխական ճըշ-մարտութեան օրակն մը:

Ինչպէս կը հաւաստուի մեզ, ԱԶԳը վեր. Հնչակեան Նահապետի վարչու-թեան քերանք կը նկատուի, եւ անի-կայ պիտի ձաղկէ յեղափոխութիւնը չահագործող եւ գայն իրենց խանութ ընող մակարոյճները:

ԱԶԳին տարեկան րաժնեգինն է ար-տասահմանի համար 10 ֆր.

Հասցէն է
Խմբագրութիւն ԱԶԳի
Բ. Օ. Պօքս 2387
ՊՕՍԹՈՆ, (Ամերիկա)

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱՔՈՒՐ, ԱԺԱՆ ԵՒ ՇՈՒՏ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՆ

«Իրաւունք» ի խմբագրութիւնը յանձն կառնէ տպագրական ամէն տեսակ գործեր:

Հարաւեկիւն հրաշիրագրեր, Նամակագրութիւններ, Մանագրներ, Այցաքարտեր, Յայտարարութիւններ, Հայտերադրեր, Եռայլն պատրաստել մեծ խնամքով եւ չափաւոր գներով:

Տպագրական զարդագործերու համար սկսած են հասնիլ նոր եւ ընտիր տառեր:

Խմբագրութիւնս իր տրամագրութեան տակ ունի նաեւ Պուլկա-րիւնէն եւ ֆրանսերէն գրեր ամէն տեսակներով:

— ԾԱՆՁԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈԽՈՒՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ —

— ՎՃԱՐՈՒՄԸ ԿԱՆԻԹԻՆ —